600.0760.26.12.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018 թվականի №760Ա
ք.Երևան

«ՇՈՒՄԵՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի նոյեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված դիմումով խնդրել է վերանայել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի №269Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» №398Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Ընկերության «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0551 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ№0551 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման ժամկետը, քանի որ նշված 15 ամիսն անիրատեսական է՝ հայտնելով, որ՝

1) Հանձնաժողով ներկայացված՝ Կայանի տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ՝ հիմնական շինարարական լուծումներ բաժնում, Կայանի կառուցման ժամկետը նշվել է 24 ամիս (նախագծային աշխատանքների ավարտից հետո), որի հիման վրա Ընկերությունը 2010 թվականի սեպտեմբերի 29-ին ստացել է Կայանի կառուցման №0374 լիցենզիան՝ 24 ամիս ժամկետով, իսկ №0551 լիցենզիայում արդեն որպես կառուցման ժամանակահատված ամրագրվել է 17 ամիս.
2) շինարարական աշխատանքներ կատարելու ժամկետների վերաբերյալ պարզաբանում է ներկայացրել «ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ՆԱԽԱԳԻԾ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, համաձայն որի՝ զուտ շինարարության համար անհրաժեշտ ժամկետ է նշվել 24 ամիսը.

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարը տրամադրել է տեղեկատվություն այն մասին, որ Կայանի կառուցման հասցեում ձմռան ամիսներին ճանապարհներն անանցանելի են.

բ. Ընկերությունը 2018 թվականի նոյեմբերի 6-ի դիմումին կից ներկայացրել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 6-ի №592 գրության և «ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 27-ի №06 տեղեկանք-պարզաբանման պատճենները.

գ. Ընկերությունը հայց է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հանձնաժողովի՝ Որոշման 1-ին կետի մեջ «մինչև 2020 թվականի հունվարի 29-ը» ժամկետի փոփոխման վերաբերյալ մասը վերացնելու, դրանից բխող գործողությունների համար ողջամիտ և իրատեսական ժամկետ նշանակելու ու Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը կասեցնելու պահանջներով.

դ. Ընկերությունը սույն թվականի նոյեմբերի 28-ի գրությամբ տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից վերադարձվել է Ընկերության հայցադիմումը, հետևաբար վերականգնվել է վարչական մարմին դիմելու Ընկերության իրավունքը, և վերստին խնդրել է վերանայել Որոշմամբ փոփոխված ժամկետը.

ե. սույն թվականի նոյեմբերի 28-ից հարուցվել է Որոշման վերաբերյալ բողոքի քննարկման վարչական վարույթ.

զ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից.

է. Որոշման բողոքարկման վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Ընկերությանը Կայանի կառուցման №0374 լիցենզիան տրամադրվել է Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 29-ի №511Ա որոշմամբ՝ մինչև 2012 թվականի սեպտեմբերի 29-ը գործողության ժամկետով, որն այնուհետև

Հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի №360Ա որոշմամբ երկարաձգվել է մինչև 2014 թվականի հուլիսի 29-ը.

2) հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի հունիսի 19-ի №ՀՕ-86-Ն օրենքի 16-րդ հոդվածը և հաշվի առնելով Ընկերության 2014 թվականի հուլիսի 1-ի հայտը, Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի №269Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է ԼԷ№0551 լիցենզիան, որով Կայանի կառուցման ժամանակահատվածը հայցվող 2 տարվա փոխարեն ամրագրվել է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 29-ը (երկարաձգվել է 17 ամսով)՝ հաշվի առնելով այն, որ Ընկերությունն արդեն իսկ ներկայացրել էր տեխնիկական և բնապահպանական փորձաքննություններ անցած նախագիծը: Այնուհետև Հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №432Ա որոշմամբ կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2017 թվականի մայիսի 29-ը, իսկ 2017 թվականի մայիսի 17-ի №166Ա որոշմամբ՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 29-ը,

3) Ընկերությունը 2018 թվականի հոկտեմբերի 2-ի գրությամբ խնդրել է երկարաձգել ԼԷ№0551 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը մինչև 2020 թվականի հոկտեմբերի 29-ը՝ 2 տարով,

4) Որոշման, այդ թվում՝ դրանով ԼԷ№0551 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածի՝ 15 ամսով երկարաձգման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից՝

- «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

  5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետ, համաձայն որի՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը,

  23-րդ հոդվածի 3-րդ կետ, համաձայն որի՝ լիցենզիայի գործողության ժամկետը և գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ և ամրագրվում լիցենզիայում,

35-րդ հոդված, համաձայն որի՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը

- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդված, համաձայն որի՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման նպատակներից է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը.
- «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս, համաձայն որի՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորման առանձնահատկությունները սահմանվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա համաձայն ընդունված լիցենզավորման կարգով.
- Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 39-րդ կետ, համաձայն որի՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի.

5) Որոշմամբ ԼԷ№0551 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը հայցվող 17 ամսի փոխարեն երկարաձգվել է 15 ամսով՝ հաշվի առնելով այն, որ դեռևս 2010 թվականից՝ Կայանի կառուցման №0374 լիցենզիայի տրամադրման պահից մինչ օրս, շուրջ 8 տարի, Ընկերության կողմից Կայանի կառուցմանն ուղղված որևէ աշխատանք չի կատարվել (ինչը փաստվում է Ընկերության կողմից տարբեր տարիներին Հանձնաժողով ներկայացված տեղեկանքներով)՝ ինչի արդյունքում, ըստ էության, խախտվում է համապատասխան բնական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պահանջը, ընդ որում նույն մոտեցումը Հանձնաժողովի կողմից ներկայումս կիրառվում է բոլոր լիցենզավորված անձանց նկատմամբ,

6) Որոշմամբ երկարաձգված ժամկետի վերանայման համար Ընկերության կողմից բավարար փաստական և իրավական հիմնավորումներ չեն ներկայացվել:

Մասնավորապես, Ընկերության կողմից դեռևս 2010 թվականին Կայանի կառուցման լիցենզիա ստանալու հայտնին կից ներկայացված «ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2009 թվականին կազմված՝ «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական հիմնավորման 12-րդ աղյուսակի՝ նախագծային և շինարարական աշխատանքների օրացուցային գրաֆիկի համաձայն՝ կառուցման համար անհրաժեշտ 24 ամիսներից 7 ամիսը նախատեսված է եղել նախագծային, նախահաշվային աշխատանքների և փորձաքննությունների համար, իսկ բուն շինարարական աշխատանքների համար՝ 17 ամիս: Ուստի առնվազն տարակուսելի է Ընկերության կողմից ներկայացված «ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվության ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 27-ի №06 տեղեկանք-պարզաբանումը առ այն, որ զուտ շինարարության համար անհրաժեշտ ժամանակ է ընդունվել 24 ամիս՝ չհաշված նախագծային և փորձաքննության համար անհրաժեշտ ժամկետը: Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 6-ի №592 գրությանը («քաղաք Ստեփանավան Ձորագետ 10,11,12» հասցեների հողատարածքներ տանող ճանապարհը ձմռան ամիսներին անանցանելի դառնալու և համայնքի կողմից չսպասարկվելու վերաբերյալ), ապա այն որևէ կերպ չի կարող դիտվել որպես բողոքի հիմնավորում, քանի որ դրանում նշվածը, ըստ էության, հանդիսանում է կանխատեսում դեռևս տեղի չունեցած եղանակային խոչընդոտների վերաբերյալ: Ապագայում մատնանշված իրավիճակի առաջացման և այդ կերպ Ընկերության կամքից անկախ Կայանի կառուցման աշխատանքները խոչընդոտվելու դեպքում, վերջինս հնարավորություն ունի դիմելու Հանձնաժողով նման իրավիճակը ֆորս մաժոր ճանաչելու համար՝ համապատասխան իրավական հետևանքներով: Միաժամանակ, հարկ է նշել, որ Ընկերությունը որպես կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող, նախքան լիցենզիայի ստացումը պարտավոր էր գնահատել գործուեոնության հետ կապված բոլոր ռիսկերը

7) բացակայում են Որոշման բեկանման՝ Օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Մերժել Ընկերության 2018 թվականի նոյեմբերի 6-ի և 28-ի դիմումներով ներկայացված բողոքը՝ Որոշումը թողնելով անփոփոխ:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
26 դեկտեմբերի 2018թ.